

## ՔՈԹԵՆ ՏԻԿՆՈԶ

Ա.ՔՍՈՐԱԿԱՆ ԱՅՆ Ի ՍԻՊԵՐԻԱ.

Վ. Ե. Պ. Գ.

Թուպոլսք մայրաքաղաք Սիսկերիոյ՝ բնակէ յեղրգետոյ. 'ի հիւսիսոյ անտառք մինչեւ ցծովն սառնապատ շրջապատեն զայն ընդ ասպարէզս իբր չորեք հազար։ Անդ լերինք ամուլք և ապառաժք՝ ծածկեալք 'ի յաւերժական ձեանց, դաշտք անբոյսք և անմշակք՝ որ 'ի ջերմագոյն իսկ աւուրս ամարայնոյ հազիւ եղկանան ոտնաչափ 'ի խոր, և գետք ընդարձակք տիրատեսիլք՝ որոց ալիք պաղեալ և ձուլեալ չոռոգանեն երբէք զարօտս, և ոչ զփթթել ծաղկանց յոտին իւրեանց տեսանեն։ Անդը ևս 'ի բենեռն կոյս՝ ոչ մայրի ուրեք երեեալ, ոչ եղեին, և ոչ մի 'ի ստուար ծառոց. այլ թուփք և մացառք ըզշարաբաստիկ երկրին այնորիկ յօրինեն զարդ, և ճախճախուաք մամուապատք՝ որք զյետին ճիգն բնութեան յանդիման առնեն՝ 'ի շունչ վախճանին անդանօր հասեալ. անտի և անդր չիք և նշմարանս տեսանել զդալարւոյ։ Աակայն և յարհաւիրս անդ յաւէրժ ձմերայնոյ՝ տեսարանս վսեմականս ընծայէ բնութիւն. անդ այգ հիւսիսի մեծավայելուչ յաճախ երեեալ՝ փարի զոլորտիւք աղեղնակերպ 'ի լոյս պայծառ, ուստի սիւնք հրեղէնք զողդոջունք իջեալ՝ ածեն 'ի տեսիլ հիւսիսայնոց գաւառաց թատր հրաշակերտ, անծանօթ հարաւաբնակ ազանց։

Ընդ հարաւակողմն թուպոլսքի տարածանի անապատն իշխմ, և դաշտավայր՝ ուր ցանեցիր սփոեալ կան շիրիմք, և լիճք աղտաղտուկք անջրպետեն զայն 'ի Սկիւթաց՝ որ են թափառականք, ազգ կուապարիշտ։ ի ճախմէ սահման հատանէ նմա իրթիշ գետ՝ որ յածեալ շրջանաւալոյտ երթայ կորնչի յելս սահմանաց Ճենաստան երկրի, և թուպոլ յաջմէ, ոյր եզերք մերկք և ամուլք հատորս ևեթ ժայռից ընծայեն աչաց՝ դիզեալս զիրերօք, աստ անդ ևեթ եղեին 'ի ծայրսն բերելով։ Առ ստորոտովնոցին, 'ի խաղ մի թուպոլ գետոյ, կայ վիճակն Աայիմքայ՝ հեռի 'ի թուպոլսքէ ասպարէզս ոչ ինչ նուազ քան զերկու հազար, յեղր անապատին՝ ուր ամենայն ինչ որպէս զարե երկրին ծածկի 'ի մուայլ, և երկիր անդ որպէս զերկինս նորին է տիսուր։

Աակայն իշխմ, այնու զի են անդ աւուրք ինչ ամարայինք, և ձմեռն անդ թէպէտ և սաստիկ՝ այլ ոչ ինչ աւ ելի տեսէ քան զա-

միսս ութ, կոչի իտալիա Սիսկերիոյ։ Զօրհանապազ 'ի ձմերայնի շնչէ անդ հողմ հիւսիսոյ՝ բարձեալ բերելով զբուք արջային, և զսարսուռ 'ի ծուծս ուկերաց թափանցիկ։ Անդստին 'ի սեպտեմբեր ամսոյ պաղի թուպոլ սառնապատ, և ճիւնախաղաղ ծածկի անդ երկիր ցվերջ ամսեանն մայիսի։ Յայնժամ 'ի լուծանել ձեանց 'ի շողից արեգական՝ սքանչելահրաշ փութով կանաչանան ծառք, և յերկուս և յերիս աւուրս փթթին ծաղկունք առհասարակ։ աճելոյ բուսոց գոգցես իմն լահ ճարճատ. բուրէ վարդից 'ի թփաստանաց անտի անուշահոտութիւն. 'ի հեր աղուամազ ծաւալի ընդ տամուկս սինձ համասփիւռ։ ի հոյլխուռներամխայտայ արագիլ. բագք խայտաբղէտք, սագք հիւսիսայինք ընդ ծուփս լճից. և սպիտակափայլ կոռունկն զողեալյամուրս եղեգանց՝ զնէ զբոյն իւր ճարտարակերտ 'ի կնիւն փափուկ յեղտիւրս ամայիս. և սկիւռ թեթև ծառոց 'ի ծառս ընդոստ յանտառի՝ գեղմնապատ թաթիւքն և տտամբ օգնեալ, ընթանայ ընդ օդս՝ կրծել զմայրից ոստոց խաւարծիս, և զտերևս թփոց։ Զի են և 'ի ցըրտասառոյց գաւառս բնակելոց՝ աւուրք զուարճալիք. այլ ոչ և աքսորելոց անդր։

Առաւելագոյնք յեղկելեաց անտի կեան 'ի զիւղս գետեզերեայս, 'ի թուպոլսքէ մինչեւ ցեզը իշմեան անապատին։ իսկ այլք տարագիր 'ի հիւղս, և ընդ դաշտս սրիւեալ։ Ոմանց արքունուստ սահմանեալ է ոռնիկ, իսկ այլք անթոշակ՝ յորսոց երկրին ձմերայնոց կերակրին, բնաւից 'ի գութ զտեսողս շարծեալ, բնաւք եղկելիք 'ի նոցունց ձայնեալ։ ի ճախճախուտ անտառի ուրեք հեռի 'ի Աայիմքայ՝ ասպարիզիւք իբր տասն, ուր ճահիճք են յաճախսաւորք, մերձ 'ի լիճ խորին բոլորաձեւ, ափնածիր 'ի թուխ և 'ի սպիտակ կաղամախեաց, բնակէր յաքսորս այր ոմն ամաց քառասուն և հնգից, հանդերձ կնաւն իւրով, և չքնաղագեղ դստերաւ, որ այն ինչ 'ի փթիթս գեղածաղիկ տիոցն էր հասեալ։

Զէր նոցա յանապատի անդ ընդ ումեք կցորդութիւն։ ելանէր այրն մենաւոր 'ի յորս, և չէր երբէք երթեալ նոցա 'ի Աայիմքա, ոչ իւր, ոչ կնոջն և ոչ դստեր։ Բաց 'ի սկիւթուհւոյ ումեքէ աղքատ շինականէ՝ որ աղախմէրն նոցա, ոչ ումեք հրաման էր 'ի հիւղնոցա մտանելոյ։ Ոչոք զհայրենիս նոցա գիտէր, ոչ ոք զազգ նոցա, և ոչ վասն որոյ իրաց աքսորեալն էին։ քաղաքապետին ևեթ թուպոլսքի գիտելով զգաղտնիսն, և սորա չէր ինչ յայտնեալ փոխանորդին իսկ իւրում 'ի Աայիմքա, բայց միայն պատուիրեալ 'ի յանձնելն նմա զպահպա-

նութիւն նոցա՝ տալ բնակութիւն դիւր, և պարտէզ փոքրիկ, կերակուր և հանդերձ, այլ զգուշանալ՝ զի մի ընդ ումեք խօսեսցին, և մանաւանդ արգելուլ զնամականի՝ եթէ երբէք իշխեսցեն զրել յարքունիս 'ի Ռուսաստան։

Աստի այսքան յանձանձանք, և անտի գաղտնիք և զգուշութիւն այնպիսի խիստ՝ տեղի տային կասկածելոյ զի ընդ անփառունակ յորջորջանօքն — քանզի կոչէր և թ նա Պետրոս Սփրինճեր — ծածկէին փառք և թշուառութիւն նորանշան, թէ արդեօք և ոճիր դժնեայ, կամ ընդ հակառակն անիրաւութիւն առ նա մեծ։ Բայց ամենայն ճիգն իւր 'ի դերե. ելեալ հասուլնելոյ գաղտնեացն, գաղարեաց նա փութով 'ի խոյզ և խնդիր առնելոյ, համայն և 'ի կարեկցութենէ։ Ոչ ևս ոք խորհէր զտառապելոցն՝ որ կէին սնտես, և 'ի սպառ յայնմէնետէ եղեն 'ի մոռացօնս. բայց միայն 'ի թափառել ուրուք յորսորդաց ընդ անտառն, և 'ի հասանել յեզր լճին, եթէ հարցանէր՝ ոյք ոմանք 'ի հիւղի անդ բնակէին, առնոյր պատասխանի՝ թէ թշուառք ոմանք. և ոչ աւելի ինչ հետազօտեալ՝ գնայր 'ի բաց ախտակցաբար ասելով։ Տացէ նոցա Տէր դարձ 'ի հայրենիս։

Կառոյց իւր անդ Սփրինճեր բնակարան յեղենեաց յարդածածուկ. ժայռք շուրջանակի պատսպարէին զայն 'ի հիւսիսային սաստկաշունչ հողմոց, և յողողմանէ յորդելոյ լճին։ Զէին արաստոյք ժայռքն որձաքարք. 'ի թերթս նոցին 'ի խաւիխաւոյս նշոյլք արեւուն 'ի ներքս անկեալ, սնկենիք հոյլ 'ի հոյլ 'ի մուտս գարնայնոյ 'ի հերձից անտի 'ի դուրս ոստչէին, կէսք 'ի գոյն վարդից՝ բայց աղօտափայլ, այլք դեղին և լուրթ 'ի տիպ սնկենեաց պայքարեան լճին։ Իսկ 'ի փասլարս անդ, ուր էր մրրկաց խուն ինչ հողարկեալ, բողբոջք սնենեաց և մայրից բուսեալ՝ նկրտէին արմատս 'ի խոր և ստեղունս 'ի վեր մորչս արձակել։

Ի հարաւակողմն լճին ցրիւ և ցանցառէին ծառք անտառին, և ընդ մէջ նոցտ երեէր դաշտ ընդարձակ, և գերեզմանք անդանօր խիտ առ խիտ. յորոց յոգունք էին կրկտեալ, և ոսկրոտին շուրջանակի սրփուեալ կային, նշխար ազգի վաղնջականի, որ յաւէրժ 'ի մոռացօնս կայր և մնայր, եթէ ագահութեան 'ի խնդիր զարդուցն ոսկեղինաց՝ որ անդ ընդ դիակունս թաղեալ կային, չէր զնա 'ի յայտ ածեալ։

Յարենելից լայնածաւալ դաշտին կայր մատուռն փայտակերտ, 'ի քրիստոնէից կանգնեալ. և որ յայնմ կողման էին գերեզմանք՝ անձեռնմերձք կային, ոչ ուրուք

ժպրհեալ պղծել զաճիւն մեռելոց առ սրբոյ խաչին՝ որ զամենայն առաքինութիւն ազդէ 'ի մարդիկ։

Ի գաշտավայրի անդ Սիակերիոյ զձմեռն ողջոյն, որ անդ խիստն է և երկարատե, ելանէր Սփրինճեր ընդ առաւօտս յորս. հարկանէր կուզմ՝ որ ճարակին տերես գալարս զբարտեաց և վկաղամախից, էր զի և սամոյրս՝ որոց սակաւ են զիւտք անդանօր, և յաճախագոյն աքիսա՝ որոց բազմութիւն է անդ. և գնովք մաշկից նոցա մուշտակաց՝ տայր բերել 'ի թոպոլսքէ կահս կարեւորս՝ վայելուչս կնոջ իւրում, և դստերն՝ գրեան։ Զերիկունս երկայնս անցուցանէին 'ի վարժը օրիորդին, որոյ անուն էր Ելիսաբեթ. և ընթեռնոյր նա յաճախ, բազմեալ առընթեր ծնողացն, բարձրաձայն 'ի լուր նոցա՝ զիրս պատմութեանց։ Սփրինճեր հայր նորա տայր նմա ուրեք ուրեք զկայ առնուլ, խելամուտ լինել 'ի դէպս հրահանգիչս մտաց 'ի մեծախոհութիւն. իսկ Փեղորա մայր նորա 'ի կրթիչս սրտի 'ի գութ. մին զիփառաց վեհանձնութեան ցուցանէր նմա զգեղ, միւսն զբարեպաշտութեան, զգթոյ և զպարկեշտութեան։ Հայր նորա պարզէր նմազվսեմական մասունս առաքինութեան, իսկ մայր նորա որ ինչ քաղցր և սփոփիչ է 'ի նմա. ուսուցանէր նմա մին՝ քանի մեծարոյ է առաքինութիւն, միւսն՝ քանի սիրելի։ Ի խնամոց աստի երկաքանչիւրոցն ել 'ի լոյս բոյս իմն բարուց հզօր և փափուկ, որ զարիութիւն հօրն ընդ հրեշտակային քաղցրութեան մօրն կցորդէր. վեհ և խրոխտըստ ամենայնի՝ որպէս ազդէ ազնուականութիւն, բարեգորով և անձնանուէր ըստ ամենայնի՝ որպէս ազդէ սէր։

Ի սկսանել ձեանց լուծանելոյ, և ազօտ ինչ կանաչութեան յերեսս երկրի երելոյ, պարապէին ընտանիքն 'ի միասին 'ի խնամն բուրաստանին։ Սփրինճեր յարդարէր զածուս, Փեղորա պատրաստէր զսերմանս, Ելիսաբեթ աւանդէր զայնս հողոյ։ Շուրջ պատէին զվայրիկն չմենիք, հունք, և բարտիք արգոյք 'ի Սիակերիա, զի սոցին եեթ անդ բուրեն ծաղկունք անուշահուս։ Ի հարաւակողմն կոյս արարեալ էր Սփրինճերի շերմուկ, ուր երիցագոյն խնամովք մշակէր զտարաշխարհիկ ծաղկունս. և 'ի փըթթել նոցին՝ համբուրէր զնոսա, ցուցանէր հարսին իւրում, և 'ի ճակատ դստերն յեռոյր ասելով. Զարդարեաց դստրիկ՝ հայրենի ծաղկամքք, որ իբրեւ զբեզ փթթիննժդեհիկ. ո՛չ, տացեն երկինք չմեռանել քեզ հանգոյն նոցին և տարաշխարհիկ։ Զայսոսիկ՝ 'ի յուզել զթոյն բարբառէր, լոիկ և հանդարտ կալով հանապաղ. էր զի և ժամս

ձիգս կայր 'ի հիացման, բազմեալ ակնկառոյց ուրեք անքթիթ, արձակելով 'ի խորոց սրտէ հառաջանս, զորս ոչ բաւէին լուեցուցանել աղերս հարսինն և ողոք, և 'ի տեսիլ դստերն՝ ևս քան զես դառնակսկիծք յաճախէին: Անկեալ ստէպ զպարանոցաւ նորա, և 'ի մէջ բազկաց զնա առ սրտիւն ողջագուրեալ, և ապայանկարծ մօրն զնա մատուցանէր՝ ասելով. Ի բաց առ, Փեղորա, 'ի բաց առ զդստրիկդ. Վիշտք դորա և տառապանք քո՞ մահառիթք են ինձ. աւազ, և զի՞ զու եկեր այսր ընդիս. Եթէ չէիր թշուառութեան իմոյ բաժանորդ, եթէ կայիր յանդորրու և 'ի մեծարանս 'ի հայրենիս քո, անտրտունջ արդեօք լինէրինձ կալ յանապատիս: Ի լուր այսոցիկ գորովագութն Փեղորա հեղոյր արտասուս. աչք նորա, մրմունջ և շարժմունք յայտ առնէին՝ որ 'ի խորս սրտի նորա յուղէր գորով հարսանեկան: Զկարէր նա օր մի հեռի կալ 'ի նմանէ, մերձ ևեթ առ նմա ամոքէր զոտառապանս իւր: Յառաջին կեանս իւր՝ աւագութիւնք գերաստիճանք 'ի բացեայ ունէին յաճախ զայր նորա, այլ 'ի նժդեհութեան անդ կային անմեկինք յիրերաց. որպէս զի սիրելի թերես լինէր նմա աքսոր, եթէ մարթ էր յաղէտս առնն հայել անվիշտ: Փեղորա թէպէտեանցեալ էր զերեսնամենիք, այլ գեղ նորա ոչ ինչ էր նուազեալ. հաւասարապէս սիրելի էին նմա այր իւր և դուստր, և առաւել քան զնոսա արարիչ իւր. երեցունց այսոցիկ սիրելութեանց տիակք 'ի դէմսնորա երեւեալ, յաւելուին 'ի նա գեղեցկութիւն 'ի պարագայց ամաց անեղծանելի. և 'ի կերպարանաց իսկ նորա յայտնի էր, զի սահմանեալ 'ի ընէ 'ի սէր ամբիծ՝ կատարէր 'ի նմա սահման ստեղծուածոյն: Պատրաստէր նա ինքնին կերակուրս ախորժելիս առն իւրում, և միտ եղեալ ըղձից նորա յամենայնի, կետազտէր յաչս նորա զկամս նորին՝ առ 'ի կանխել կատարել զայն: Կարգ և մաքրութիւն խաղաղութեամբ հանդերձ տիրէին 'ի դուզնաքեայ յարկ նոցա. յընդարձակագունին 'ի խղից հանգչէին ամուսինք ծածկեալ մաշկեկօք. ձեռագործք Փեղորայ և դստերն ասղնէգործք և նկարէնք՝ պատէին զորմս ծխամածս: Ափրինճերի 'ի շահից որսոցն իւրոց հայթայթեալ էր և պատուհանս ապակեայս, որ դուն ուրեք յերկի անդ երեւէին՝ 'ի զեղխութիւն համարեալ: Յերկուս այլ խուզս՝ 'ի միումն ննջէր Ելիսաբեթ, 'ի միւսումն աղջիկն սկիւթացի, ուր էին և կահք խոհակերոցին և պարտիդի:

Անցանէին աւուրբ 'ի յանձանձանս առ-

տնին իրաց, յոստայնանկել զասր, և 'ի պատել զանկուածս մաշկեկօք որսոց. իսկ 'ի կիւրակէս տրտմէր Փեղորա ընդ զրկել իւրեանց 'ի սուրբ պատարագէն, և զմեծ կէս աւուրն պարապէր աղօթից: Անկեալ առաջի պատկերի սրբոյն Բասիլիոսի, որում ջերմեռանդն էր յոյժ, յանձն առնէր նմա զայրիւր և զդուստր սիրելի, և օրըստօրէ յաւելոյր յեռանդն, զփորձ առեալ զի յաղօթից անտի սիրտ իւրլցեալ հոգեւորիմաստիւք՝ յորդէր զրոյցս սփոփիչս առն իւրոյ:

Բայց Ելիսաբեթ, անդստին 'ի չորեքամեայ տիոց անեալ յանտառի՝ անծանօթ այլոյ հայրենեաց, գտանէր անդ գեղեցկութիւնս՝ զորս ընծայէ ընութիւն և 'ի վայրս ապախտ լեալս յիւրմէ, և բերկրութիւնս ընականս՝ յորս սիրտ ամբիծ ամենայն ուրեք գիտէ վայելել: Զբօննոյր 'ի խնդիր ձուոյ բազէից և սպիտակ անգեղց սողոսկէր յեզերս լճակին ընդ ժայռս 'ի վեր, ուր դնեն նոքա բոյն յամարայնի. ըմբռնէր յաճախ և վայրի աղաւնիս 'ի վարմս, և փակէր զնոսա երամովին 'ի վանդակի: Մերթ ևս որսայր ձկունս որբ տարմատարմ ընդ լիճն գնային, պատենապէնք 'ի թեփս ծիրանիս, երեւեալք յալիս անդ որպէս կարկեհան 'ի լոյծ արծաթի: Հաճ և գոհ ընդ կեանըս իւր, զի չանկանէր իսկ 'ի միտս նորա թէ մարթէր ումեք վայելել 'ի բախտ երջանկագոյն, կաղդուրէր հովասուն, և աճէր 'ի 'ի հասակ կրթութեամբ մարմնոյ. և 'ի դէմս նորա, յորում հանգչէին խաղաղութիւն և անմեղութիւն, յաւելոյր օր ըստ օրէ գեղ նորահրաշ: Ըստ այսմ օրինակի, հեռի յաշխարհէ և 'ի մարդկանէ, զարգանայր օրիորդն չքնաղագեղ 'ի տեսիլ ևեթ ծնողացն, և 'ի բերկրութիւն սրտի նոցա. որպէս ծաղիկ յանապատի 'ի նշուլից արփւոյն փթթեալ, ոչ ինչ նուազ գեղանի անտես յաչաց՝ 'ի տեսիլ աստեղն ևեթ իւրոյ կենսատուի:

Զիք սէր գորովագոյն և խանդաղելի քան որ 'ի նուազունս ամփոփիեալ. այսպիսի սիրով գորովէր Ելիսաբեթ 'ի ծնօղս իւր՝ զորս միայն ճանաչէր, զորս միայն սիրէր յաշխարհի: Փոխանակ ամենայնի էին նմա ծնօղը իւր հոգաբարձուք աղկաղկ հասակին, կենակից նմին և խաղակիցք. չգիտէր ինչ, զոր ոչ 'ի նոցանէ ուսեալ. ընդ նոսա զբօնոյր, նոցին էր չնորհապարտ ըստ հանճարոյ, ըստ գիտութեան և ըստ ամենայնի: Եւ զի ամենայն ինչ իւր 'ի նոցանէ էր, և չկարէր ինչ յինքենէ, քաղցր էր նմա հնազանդել հրամանաց նոցա զորս 'ի բարերարել միայն տային նմա: Այլ 'ի գարգանալնորա 'ի պատանեկութիւն, և 'ի սկարզել տեսութեան

մտացն, սկսանէր՝ ի միտ առնուլ՝ ի մօրն արտասուաց զհօրն իւրոյ թշուառութիւն. հետազօտէր ստէալ՝ ի նոցանէ զպատճառս աղետիցն. այլ նոքա ոչ ինչ տուեալ նմա պատասխանի, զհայրենիսն ողբային. ոչ զհայրենեացն ծանօթս տալովնմա, և ոչ որ ինչ ինքեանք՝ ի հայրենիս անդէին՝ ցուցեալ, զի մի տրտմեսցի՝ ի զիտելն յորմէ բարձրութենէ յաքսոր անդր սահեալ էին՝ նժդեհութեամբ: Բայց յորմէ հետէ ծանեաւնազտրտմութիւն ծնողացն, խորհուրդը մտացն նորա ոչ ևս հանդարտէին. կերպարանափոխեղեն կեանք նորա: Զբօսանք մանկութեան ոչ ևս քաղցրանային նմա. ելիք զբուրաստան, մոռացաւ զծաղկունս. ոչ ևս թռչնիկը իւր սիրելի էին նմա. ոչ ևս յորս ձկանց, ոչ ևս՝ ի վարել զմակուկիկիւր գնայրյեղրլճակին, խորասուզեալ՝ ի խորհուրդ՝ որ բովանդակ զմիտս նորա գրաւէր և զսիրտ: Բազմեալ երբեմն՝ ի սեպ միոյ՝ ի ժայռից, յառեալ յալիս ծովակին, խոկայր յարտասուս ծնողաց իւրոց, և՝ ի հնարս ցամաքելոյ նոցին: Գիտէր ևեթ զի ողբային նոքա զհայրենիս, այլ որ հայրենիքն այն նոցա էին՝ անգիտանայր. և քանզի հեռաւորութեամբ՝ ի հայրենեացն թշուառացեալ գտանէին, ցանկալի նմա այն իսկ էր՝ ոչ զհայրենիսն գիտել, այլ զհնարս գարձի նոցա անդր գտանել: Ամբառնայր զաշս իւր յերկինս՝ խնդրել՝ ի Տեսոնէ օգնութիւն, և այնալէս ընկղմեալ կայր՝ ի խորհուրդս յայս, զի տեղատարափք ծիւնաբերք և հողմք սաստկացունչք չկարէին ընդուտուցանել զնա: Այլ՝ ի ձայնել զնա ծնողացն՝ լսէր անդէն, և՝ ի ժայռից բարձանց իջանէր գայր թեթելնթաց՝ ի լուր խրատու հօրն, և օգնել մօր իւրում յառտնին խնամս: Բայց թէպէտ առնոցին, և թէ հեռի՝ ի նոցանէ, թէ յընթերցումն և թէ՝ ի կար պարապեալ, թէ՝ ի բուն և թէ յարթմնի, նոյն և մի խորհուրդ զուշ նորա գրաւէր. այլ զգուշանայր չյայտնել նոցա զայն, չև ուղւոյ լետլ:

Քանզի խորհէր դնալ հետի մինչեւ՝ ի Պետրովոլիս՝ ի խնդիր դարձի հօր իւրոյ. այսպիսի խորհուրդարիական երկնեաց՝ ի մտի, և՝ ի գործ այսպիսի քաջայանդուգն պատրաստէր օրիորդն երկչոտ: Բայց թէպէտ և արգելք ծանունք յանդիման լինէին մտաց նորա սակացն զօրութիւն կամաց, արութիւն սրտի, և առ Աստուած ապաւինութիւն քաջալերէին յաղթել ամենայնի: Ի հաստատել նորա՝ ի խորհուրդն, և՝ ի մերձենալ աւուրց ձեռն՝ ի գործ առնելոյ, ահացուցանէր զնա անհմտութիւն ճանապարհին. զի և ոչ ուրեք՝ ի մօտակայ շինից զիտէր ուղեորել. չէր նորա երբէք ելեալ յանտառէն, և իրը

գնալ մինչեւ անդր՝ ի Պետրովոլիս. զիա՞րդ բարբառել ընդ ազգս այլալեզուս՝ ընդ որս պարտ էր նմա անցանել. մանաւանդ զի հարկ էր նմա մուրազութեամբ հայթայթել զաւուրն պարէն: Եւ թէպէտ ապաստանէր՝ ի խոնարհութիւն՝ զոր՝ ի բարեպաշտ մօրէն էր ուսեալ, բայց և այնչափ ինչ զիստասըրտութենէ մարդկան էր լուեալ՝ զի համարէր թշուառութիւն մեծ զհարկ խնդրելոյ՝ ի նոցանէ ողորմութիւն. և զծնողացն ևս զիտելով զորդեսէր գորով, չյուսայր՝ ի նոցանէ նպաստ՝ ի չու, և չկարէր գիմել առնոսա: իսկ առ ո՞ զիմել յանապատի՝ ուր կայրն հեռի՝ ի մարդկանէ, ՚ի հիւզի անդ՝ ուր չէր մուտ ումեք. և յումմէ մարթէր նմա ակնունել օգնականութեան: Հանդերձ այսու ամենայնիւ ոչ վհատեցաւ. յուշ եղեն նմա արկածքն՝ յորմէ մազապուր լեալ էր հայր իւր, և ասէր. Զիք երկիր վայրենի՝ ուր երկինք ոչ լուիցեն ձայնի եղկելեաց, ուր խնամք երկնից թողցեն զնոսա ամայի յօգնականութենէ:

Քանզի Ափրինճեր ամօքինչ յառաջ յորս ելեալ՝ ի ձմերայնի ընդ ափափայս՝ առ որով գետահետեալ անցանէ թոպոլ, հաղիւ ճողովրեալ էր՝ ի վտանգէ, պատանւոյ ուրումն արիութեամբ: Եւ էր պատանին այն Ամոլով, քաղաքապետին թոպոլսքեայ որդի, որ անդր յաւուրս ձմերայնոյ գայր ամի ամի հետամուտ կղից՝ ի դաշտ իշխմայ, և ընդդէմարջուց խիզախել՝ ի մարտ յՈւրալեան լերինս մերձ՝ ի Այդիմքա: Անդ՝ ի հալածել նորա զարծս, որ քան զամենայն ազգս որսոց է վտանգաւոր, պատահեալ Ափրինճերի՝ զերծուցեալ էր զնա՝ ՚ի մահուանէ. և յայնմէ հետէ անուն Ամոլովի շնորհապարտ մեծարանօք յիշատակէր առնոսա, և օրիորդն և մայր նորա ըղձիւք ցանկային զբարերար իւրեանց ճանաշել և բարեբանել զնա: Հանապազօր աղօթս վասն նորա մատուցանէին, և ամ ըստ ամէ՝ ՚ի սկսանել որսոց ձմերայնոյ՝ յուսային տեսանել զնա՝ ՚ի հիւզ իւրեանց. այլ նա չերեէր երբէք առ նոսա, զի և նմա որպէս ամենեցուն՝ արգելեալ էր չմտանել առ նոսա. և ոչ արգելն այն բուն էր նմա, զի որ ինչ ՚ի ներքս՝ ՚ի հիւզի անդ էր՝ անգիտանայր:

Բայց Ելիսաբեթ յաճախագոյն ևս խորհէր՝ ՚ի Ամոլով, հասու լեալ դժուարութեան ելից յանապատէ անտի՝ առանց ուրուք օգնականութեան, և պաշտպանութիւն այնպիսւոյ ուրուք պատանւոյ զամենայն երկիւղ՝ ՚ի բաց փարատէր, բառնայր զամենայն խոչ և խութ: Զի ովլ ոք առաւել քան զնա կարող էր ուսուցանել ինքեան զհանգամանս ուղեորութեան՝ ՚ի Այդիմքայ մինչեւ

՚ի Պետրովոլիս, և զհնարս հասուցանելոյ անվրէսլ աղերս առ ինքնակալն . դարձեալ և ՚ի զայրանալ քաղաքապետին թուղոլս- քեայ ընդ փախուստ իւր՝ ու առաւել քան զնա կարող էր ցածուցանել զցասումն նո- րա, ածել զնա ՚ի գութ, և զերծուցանել զծնօղսն՝ ՚ի պատժոց՝ որոց պարտաւորս զնո- սա փախստեամբն կացուցանէր : Զայսոսիկ որ ինչ ՚ի պաշտպանութենէ նորա օգուտք էին՝ զմնաւ ածեալ, ցանկայր զիտել չե անցեալ աւուրք որսոց՝ թէ անդ էր պատա- նին . և գտանել հնարս խօսելոյ ընդ նմա: Բայց Սփրինճերի այնպէս զիղջ լեալ ընդ արհաւիրս հարսինն և դստեր վասն վտան- գի մահուն՝ յորմէ մազապուրն եղեալ էր, մինչեւ խոստանալ նոցա մի ևս յորս արջուց դիմագրաւել, և մի ելանել ընդ անտառն բայց միայն զհետ սամուրաց և այծից : Սա- կայն Փեղորայ և յետ իսկ խոստման նորա զդողանի հարկանէր սիրտ՝ յելանել նորա յորս, և մինչեւ ՚ի դարձ նորա կայր՝ ՚ի կաս- կածի սրտաթունդ յահէ արկածից :

Ծածկէր յայնժամ երկիր ձիւնապատ, և էր ցուրտ զերեսուն աստիճանօք ՚ի վայր քան զսառն խոնարհեալ . ՚ի խորս անդ ձր- մերայնոյ, ՚ի միում՝ ՚ի պայծառ աւուրցամ- սեան դեկտեմբերի, և Սփրինճեր հրա- զինեալ յորս ՚ի դաշտ: Եւ յելանելն իւ- րում զիրկս արկեալ հարսինն և դստեր, խոստանայր դառնալ նախ քան զմուտս ա- րեգական . բայց օրն տարաժամէր, արե- դակն ՚ի մուտս էր, և Սփրինճեր ոչ երեւէր: Յետ մահաշուկ արկածիցն չե ևս թերա- ցեալ էր նա ՚ի խոստմանէն, վասն որոյ եր- կիւղ անհնարին կալաւ զՓեղորա . իսկ Ե- լիսաբեթ ջանայր փարատել զերկիւղ նո- րա, այլ ինքն ևս յերկիւղի կայր: Կամէր յօդնութիւն հասանել հօրն, և չկարէր թողուլ զմայր իւր յողբս: Փեղորա փափ- կասուն էր և տկար, և մինչեւ ցայնժամ ըստ եզր լճին չե էր անցեալ . այլ ՚ի սաս- տիկ հոգոցն ստիպեալ յայնժամ, բուռն արար անձին զնալ ընդ դստեր իւրում՝ ՚ի խնդիր առնն . ելին մեկնեցան ՚ի միասին, դէմ եղեալ ընդ անտառախիտս ՚ի դաշտն: Ցուրտ սաստիկ էր, թուէին մայրիք ան- տառին սառնեղէնք, կողերց նոցա եղեմնա- պատ սպիտակացեալ . մէգ թանձրամած ծածկէր զեղերս շուրջանակի . արե ՚ի մուտս՝ ՚ի գոյն տիսուր ներկանէր զհամագոյս, և ձիւն միապաղաղ բիւրդանման ակնախտիղ՝ դեղեւէր զՓեղորա ՚ի գնացս . բայց Ելիսա- բեթ ընդ նովին երկնաւ սնեալ, և սովոր ՚ի խիզախել ընդ սաստկագոյն ձմերունս, քաջալերէր զմայր իւր և օգնէր նմա: Այս- պէս դեռաբողբոջ ընձիւղ ծառոյ տեղափո-

խելոյ յերկիր օտար և տկարացելոյ՝ ըն- դելացեալ երկրին ուռնանայ ծլարձակ, և ՚ի սուղ ժամանակի նեցուկ մտեալ ոստոցն մայրենեաց՝ ընդ հովանեաւ իւրով ծածկէ զբունն կենսատու իւր:

Մերձ ՚ի դաշտ անդր հասեալ՝ իբրև ոչ ևս զօրէր Փեղորա յառաջ գնալ, ասէ ցնա Ելիսաբեթ . Որս տարաժամեալ է, մայրիմ. հանգիր դու աստ, և երթայց ես յեզր ան- տառիս . եթէ յամեմք, զիշեր ՚ի վերայ հասանէ, և ոչ ևս կարասցուք տեսանել զհայր իմ՝ թէ իցէ ՚ի դաշտին: Յայնժամ Փեղորա յեցեալ ՚ի մի ՚ի մայրեաց, եթող դստերն գնալ . և սրացաւ նա ՚ի դաշտն . և ՚ի վերայ միոյ ՚ի գերեզմանաց, որ բլրաձե- ամբառնան անդ խիտ առ խիտ, դէտ կա- ցեալ օրիորդն սրտատրով և արտօսրալից՝ խնդրէր զհայր իւր, և ոչ ուրեք տեսանէր զնա: Զերեէր ինչ ՚ի լուռ և յամայի դաշ- տին . մութ գիշերոյ սկսանէր զերկիր ընդ երկինս խառնել . և ահա յանկարծ ճայթեաց հրազէն ոչ ինչ ՚ի բացէ, և արծարծանէր յոյս յօրիորդն . զի զթնդիւն, զոր ՚ի ձեռանէ հօրն ևեթ էր լուեալ, համարէր անշուշտ հաւաստիս գտանելոյ անդ զհայր իւր . և դի- մեալ ընդ այն կողմն, տեսանէ յետկոյս ժայռի այր մի կորացեալ իբր ՚ի խնդրել ինչ ընդ երկիր, և ձայնէ . Հայր իմ, սիրե- ցեալ հայր, դու իցես: Դարձաւ ՚ի նա ոյրն, և չէր Սփրինճեր . այլ պատանի գե- ղանի՝ որ ՚ի տես օրիորդին հիացեալ եկաց: Յայնժամ յաւել Ելիսաբեթ ցաւազին . Ոչ, չես դու հայր իմ, այլ տեսե՞ր դու զնա ՚ի դաշտիդ, և ուր կարացից գտանել զնա: Պատասխանի ետ պատանին . Զհայր քո ոչ ճանաշեմ. այլ չէ արծան ՚ի տարաժամուս կալ քեզ աստ միայնակ . բազմավտանգ է վայրս, չերկընչիս դու բնաւ: ՚ի վերայ էած օրիորդն . Ո՛հ, շիք ինձ վտանգ ահարկու քան զայն, եթէ չգտից զհայր իմ: Եւ զոյգ ընդ բանին ամբարձ զաչս ՚ի յերկինս . աղ- նուականութիւն, գորով և արիութիւն փայ- էլին ՚ի նոսա՝ յայտարարք ոգւոյ, և հան- դերձելոյ բախտի նորա նախագուշակք: Յուզեցան գութք պատանւոյն . թուէր նմա երազել, զի հանգոյն ինչ չէր նորա տե- սեալ, և ոչ ՚ի մտի պատկեր այնպիսի եր- բէք նկարեալ: Եհարց զանուն հօր օրիոր- դին . և նա ասէ . Պետրոս Սփրինճեր է ա- նուն նորա: Յայնժամ ասէ պատանին . Եւ որպէս, դուստր աքսորելոյն իցես՝ որ առ լճիւդ բնակէ ՚ի հիւղիդ . մի ինչ հոգար, ճանաշեմ զնա, չե ևս էանց ժամ մի յորմէ հետէ մեկնեցաւ նա յինէն՝ գնալ ընդ այլ ճանապարհ ՚ի բնակութիւն իւր . և արդ հասեալ իսկ իցէ անդր: Զայն իբրև լուաւ

օրիորդն , փութացաւ՝ ուր թողեալն էր զմայր իւր , և 'ի ձայն ցնծութեան առետաւորէր նմա 'ի հեռուստ մայրակոչ լինելով մինչև իսկ մարթէր ձայնի իւրոյ առ նա հասանել : Եւ իբրև եկն 'ի տեղի անդր՝ և չեգիտ զնա , վարանեալ տագնապեալ ձայնէր յանտառին գծնօղս իւր . և ահա ձայնք հնչեցին յայնմ կողմանէ լճին . փութացաւ եհաս , և առ սեամն հիւղոյն տեսեալ զհայր իւր և զմայր , գիմեաց 'ի գիրկս նոցա : Որոց բազկատարած ընկալեալ զնա , և ողջագուրեալ զմիմեանս , պատմէին թէ որպէս ընդ այլեայլ ուղի 'ի հիւղ անդր դարձեալ էին . և ահա հասեալ առ միմեանս , և զերծեալ 'ի հոգոց : Յայնժամ գիտաց օրիորդն զի զետ իւր եկեալ էր պատանին . բայց Ափրինճերի տեսեալ զնա՝ ասէ . Յաւէ ինձ , ո Ամոլոֆ , զի անագան է ժամս . գիտես զի չէ ինձ օրէն և ոչ գիշեր մի ընդունել զքեզ : Ի լուր անուան պատանւոյն՝ Ելիսարեթ և մայր նորա գոչեցին . Ամոլոֆ ուրեմն է դա , բարերար մեր . և երկոքեան 'ի միասին անկան յոտս նորա . Փեղորաթանայր զայնոսիկ արտասուօք , և Ելիսարեթ ասէ . Հանապազօր մաղթեմք քեզ օրհնութիւն 'ի Տեառնէ , քաջդ Ամոլոֆ , զի զերեամ մի յառաջ ապրեցուցեր դու զհայր մեր : Պատասխանի ետ պատանին յոգւոց հանելով . Եւ լուաւ ձեզ Տէր , և առաքեաց զիս այսր . զի սակաւն այն զոր արարի ձեզ՝ չէր ինչ արժանի վարձուց այդքանեաց :

Գիշեր խորին էր , խաւար աննշոյլ պատէր զանտառաւն . չէր մարթ անվտանգ դառնալ գիշերայն անդր 'ի Այիմքա , և ոչ Ափրինճեր իշխէր հրաժարել 'ի հիւրընկալելոյ զապրեցուցիչ իւր . բայց երդմամք երդուեալ էր քաղաքապետին թոպոլսքեայ չընդունել զոք 'ի բնակութիւն իւր , և զարհուրէր դրժել երդմանն : Վասն որոյ անձնամատոյց եղեւ ուղեկցել պատանւոյն մինչև 'ի Այիմքա , և ասէ . Լուցից ջահ , և երթայց առաջի քո , զի տեղեակ եմ ես ուղեաց անտառիդ , զգուշանալ 'ի վտանգաւոր ճահճաց և լճից : Բայց Փեղորայ երկուցեալ անկաւ յոտս նորա՝ խափանել՝ զնա . և Ամոլոֆ ասէ . Թող ինձ , սիրելիդ իմ , կալ աստ 'ի հիւղիդ մինչև ցառաւոտ . ոչ ինչ զանխուլ է յինէն հրաման հօր իմոյ , և ոչ այնքանոյ խստութեանն ընդ ձեղ պատճառք անծանօթ են ինձ . այլ ոչ ինչ երկրայիմ զի ներեսցէ նա քեզ ըստ հարկի իրացս զերծ գոլ յերդմանէդ , և տեսցես՝ զի առաքեցայց 'ի նմանէ ընդ հուպ՝ չնորհունել քեզ վասն հիւրոյիցդ : Յայնժամ Ափրինճերի կալեալ զծեռանէ նորա , եմոյն զնա 'ի հիւղ անդր , և նստան առ թոնրով .

իսկ Փեղորա ընդ դստերն պատրաստէր ընթրիս :

Եւ էր Ելիսարեթ 'ի ձեւ գեղջկուհեաց Սկիւթացւոց . պատմուճան կարմիր հանգրիճեալ 'ի վեր , և պարածածկեալ բարձք իւր վթենեաւ . հիւսք վարսիցն մինչ 'ի գարշապարս անդր նորա իջանէին . բաճկոնակ կոճկէն զսպեալ ընդ մէջ զբոլոր անձինն ընծայէր 'ի տեսիլ զբարեծեութիւն , և թեղանիք յարմուկն 'ի վեր հարեալ՝ զբազկացն գեղ . որպէս զի զգեստուցն պարզութեան երևելի ևս զկերպարանաց նորա կացուցանել զգեղ վայելչութեան . և շնորհք այնպիսի 'ի շարժուածն նորա երեւեալ , զի 'ի զմայլումն և 'ի գութ խանդաղատէր պատանին , և չկարէր շրջել 'ի նըմանէ 'ի բաց զայս և զսիրտ : Ոչ ինչ նուազ և օրիորդն բերկրէր 'ի տեսիլ պատանւոյն . այլ սուրբ և ամբիծ էր բերկրութիւն նորա , յորդորեալ 'ի շնորհապարտ սրտէ վասն բարերարութեան պատանւոյն , և ակնկալեացն 'ի նմանէ բարեաց . սրտազիտին Ալտուծուծոյ տեսանելով զսիրտ օրիորդին՝ զի վասն ծնողացն և բովանդակ վասն նոցա առնէր զամենայն :

Պատմեաց յընթրիս անդ պատանին , զի յերից աւուրց հետէ լուեալ էր 'ի Այիմքա զսովալուկ գայլոց ընդ կողմտնսն ընդ այնոսիկ աւար հարկանել , և զի ընդ հուպ վասն այնորիկ արշաւանքորսոց անդր պատրաստէին՝ բնաջինջ առնել զնոսա : Յայնժամ Փեղորայ հատաւ գոյն երեսացն , և ասէ ցԱփրինճեր . Յուսամ զի չերթայցես դու անդր , արկանել 'ի վտանդ զկեանս քո՝ որ պատուականագոյն է ինձ քան զամենայն բարութիւնս : Պատասխանի ետ Ափրինճեր ողորմազին . Զինչ է այդ՝ զոր խօսիսդ , Փեղորա , զինչ են կեանք իմ . եթէ չէի ես կենդանի , ոչ գտանէիք դուք յանապատի աստ . գիտիցնս իւ լիցի վախճան նժդեհութեան քո և դստերդ . գիտես իսկ դու զայն . . . Եւ հատին զբանս նորա ողբք տիկնոջն կականաւորք . և Ելիսարեթի մատուցեալ կալեալ զծեռանէ հօրն , ասէ . Գիտես դու , հայրիկ , զի չիք իմ հայրենիք բաց յանտառէ աստի՝ ուր սնեալս եմ . աստ մայր իմ ես կեցցուք քեւ բարեբաստիկք . վկայեմ սրտի նորա իբրև իմումս , զի ոչ ուրեք 'ի վերայ երկրի կարասցուք կեալ առանց քո , և ոչ 'ի հայրենիս քո : Յայնժամ Ափրինճեր ասէ ցպատանին . Լսես ո Ամոլոֆ , կարծիցնս թերես զի սփոփեն զիս բանք այսպիսիք , նա աւանիկ կարեվէր խոցեն . առաքինութիւնք դոցա փոխանակ աղդելոյ յիս ինդութիւն 'ի սուգ համակեն զիս , ածեալ զմտաւ՝ զի վասն իմ դոքա յա-

նապա տի աստ թաղեալ կան, զի վասն իմ դստրիկս այս կացցէ աստ անծանօթ՝ զըրկեալ 'ի սիրոյ : Ի վերայ էած օրիորդն . Հայր իմ, ահա 'ի գիրկս ծնողացդ իմոց գգուիմ, և ընդէր զրկեալ ասես զիս 'ի սիրոյ : Իսկ հօրն ոչ կարացեալ ժոյժ ունել գթոյն՝ յաւել . Այլ չվայելեսցես, դուսար իմ, 'ի բերկրանս՝ յոր ես քե վայելեմ, չլուիցես զքաղցր բարբառ որդւոյ սիրելոյ, կեցցես միայնակ անայր անորդի որպէս ճնճղուկ 'ի վայրի : Զոհ անպարտական, դու անգիտանաս յորոց զրկիսդ . այլ ես զիտեմ յորոց զրկեմս զքեզ . կորուսեալ է ինձ ամենայն

Ի լուր բանիցս այսոցիկ գորովեալ Սմոլոֆ, սրբէր ստէպ զարտասուս . կամէր բարբառել, այլ հեղձամղձուկ լինէր բարբառ իւր . և ուր ուրեմն սկսաւ խօսել և ասէ . Կարես ինքնին իսկ 'ի միտ առնուլ, սիրելիդ իմ, զի յորմէ հետէ 'ի տխուր յայսմ պաշտաման կայ հայր իմ՝ ոչ նոր ինչ է ինձ տեսանել աղէտս այսալիս . բազում անգամ եղե ինձ շուրջ անցանել ընդ լայնածաւալ սահմանս իշխանութեան նորա, և ականատես լինել լալեաց բազմաց և թշուառութեան, և լսել հառաջանս և հեծութիւնս 'ի խուլ միայնութեան հեղեալ . Տեսի ես յանապատս սոսկալիս Պերեսովայ որեար չարաբաստիկ, որ կէին հեռի յընտանեաց և 'ի բարեկամաց, զրկեալք 'ի քաղցր գգուանաց . գողտրիկ բարբառոյ ոչ երբէք զսիրտ նոցա սփոփեալ, մեկնեալք 'ի մարդկանէ, հրաժարեալք յամենայնէ . ոչ միայն վտարանդիք յաքսորս՝ այլ և յաղէտս տառապանաց : Յաւել և ֆեղորա աղերսական յանդիմանութիւն առ այր իւր . Դու զամենայն ասես կորուսեալ, ուր պահեն երկինք զգուստը քոյին . Եթէ զնա ևս կորուսեալ էր քո, զի՞նչ յաւելուիր ասել . Ի բանից աստի սթափեալ Սփրինճեր, կալաւ զձեռանէ դստերն և զփեղորայ, և փարեալ զնոքօք, և յերկաքանչիւր 'ի նոսին ակնարկեալ, ասէ . Այո, զգամ զի շեւս ինձ կորուսեալ է ամենայն :

Իբրեւ այգ եղե, 'ի հրաժարել պատանւոյն 'ի նոցանէ՝ արտմեցաւ Ելիսարեթ, զի ցանկայր յայտնել նմա զխորհուրդ իւր, և խնդրել 'ի նմանէ ձեռնտուութիւն : Զէր նորա գտեալ վայրիկ մի առանձինն ընդ նմա խօսելոյ, զի կային միշտ անդ ծնօղք իւր՝ որոց չկամէր ինքն յայտնել զխորհուրդ իւր . բայց յուսայր 'ի դառնալ նորա առնուլ պարապ 'ի խօսել, վասն որոյ անձկով մեծաւ ասէ . Պարմանիդ քաջ, ոչ ևս դարձցիս առ մեզ . տուր ինձ բան՝ զի չիցէ ինձ այս յետին տեսութիւն կեցուցչին հօր իմոյ :

Զարմացաւ Սփրինճեր ընդ բանս դստեր իւրոյ, այնպիսի անձկանօք ասացեալ . և տագնապէր 'ի սրտի՝ ածեալ զմտաւ զհրաման քաղաքապետին, և յաւել՝ զի չէր իւր օրէն միւսանգամ զհրամանաւ նորա անցանել : Առ որ պատասխանի ետ Սմոլոֆ, ընդունել 'ի հօրէ իւրմէ զայս շնորհ վասն իւր 'ի դառնալ առօրին 'ի թոպուլաքի, և յաւել . Ի խնդրել իմում 'ի նմանէ զգընորհս զայս վասն իմ, չկամիցիս զի խնդրեցից ինչ և վասն քո, բարեկամ . բարեբախտ զանձն համարիմ պիտանի լինել քեզ . չիցէ ինչ քո խնդիր 'ի նմանէ : Պատասխանի ետ Սփրինճեր տիրագին . Եւ ոչ մի ինչ : Յայնժամ պատանին սրտաբեկեալ, և սուղ ինչ զաչս 'ի վայր արկեալ, դարձաւ ապա առ ֆեղորա, զնոյն և նմա արար հարցուած . և նա ասէ . Յանկայի զի հրաման տայր ինձ հայր քո գնալ 'ի տօնս ընդ դստեր իմում յեկեղեցի 'ի Սայիմքա, 'ի լուր սրբոյ պատարագին : Եւ խոստացաւ պատանին ընդունել նմա զշնորհն . և մեկնեցաւ գնաց օրհնաբանեալ 'ի նոցունց, և խոստացաւ դառնալ ընդ հուպ ըստ ըղձից օրիորդին : Բայց 'ի գնալն, միտք իւր և խորհուրդ զօրիորդաւն յածէին . չըքնաղագեղ տեսիլ նորա՝ յանապատին յերիկէ 'ի միտս իւր տպաւորեալ, 'ի տեսանելն ևս զնա ընդ ծնօղս նորա, կապեցաւ ոզի իւր ընդ նմա բոլորովին : Յիշէր զամենայն խօսս նորա, նկարելով զկերպարանս նորա և զհայեցուած 'ի մտի . յիշէր մանաւանդ զվերջին բան նորա, առանց որոյ հրաժարէր թերես ակնածութեամբ 'ի սիրոյ նորա . այլ այնու անձկով խնդրել օրիորդին զդարձ նորա, և յեղուլ ձայնին 'ի խընդրելն՝ որ զգողտրիկ սրտի նորին հոլանէր զիտանդաղատանս, ետուն նմա յորոց կրէրն 'ի նոյն և զօրիորդն կարծել : Որովք վառեալ միտք պատանւոյն՝ ոչ ևս ըստ դիպաց ինչ զերիկեան հանդիպումնն համարէր, այլ փոխադարձ սիրելութեան ազդումն 'ի սիրտ օրիորդին որպէս յիւրն . և ցանկայր անժոյժ զհաւաստիս գուշակութեանցն ընթեռնուլ յամրիծ սրտի օրիորդին : Այլ աւազ, զի չկարէր գուշակել որ ինչ յաւուր միում հանդերձեալն էր վերծանել 'ի սրտի նորին :

Բայց յօրէ այցելութեան պատանւոյն յաճախեաց տրտմութիւն Սփրինճերի . 'ի յիշատակ սիրելի ազնուական և արի պարմանւոյն՝ յեղյեղէր 'ի մտի որպիսում ումեք փեսայի ցանկայրն զդուստը իւր հարանացուցանել . և վասն չկարելոյ 'ի թշուառութեան անդ ըղձիցն պատահել՝ ոչ միայն չէր նմա ցանկալի դարձ պատանւոյն, այլ և

խիթալի իսկ էր . զի մարթէր օրիորդին ոգէխառնիլ ընդ նմա 'ի հաստոյր հարուած հայրենի սրտին , 'ի տեսանել զդուստր իւր հաղեալ ըղձիւք չյուսալի հարսանեաց :

Ի միում աւուրց ընդ երեկո՝ մտայոյզ , ձեռն 'ի ծնօտի , արմուկն յեց 'ի թոնիր , հառաշէր օրիորդն և յոգւոց ելանէր : Փեղորա 'ի տեսանելն զնա ծանրաթախիծ' եթող զասեղն 'ի ձեռանէ , և սիրտ 'ի տագնաալի պշուցեալ 'ի նա՝ խնդրէր 'ի Տեառնէ ազդել իւր բանս սփոփիչս այնպիսիս՝ որ մոռացումն վշտաց նորա արացեն : Իսկ օրիորդն կացեալ ընդ հովանեաւ 'ի բացէ՝ հայէր յերկաքանչիւր , և յուսով ևեթ դադարեցուցանելոյ գարտասուս նոցին սփոփէր , աներկւան ընդ օգնականութիւն պատանւոյն 'ի կատարումն առաջարկութեան իւրոյ . զի վստահութիւն իմն անդստին 'ի սիրտ իւր ազդէր ընդ կարեկցութիւն նորա և ընդ պաշտամութիւն : Բայց կասկածէր թէ գուցէ ծնօղք իւր հակառակ կացցեն խորհրդոց իւրոց , մանաւանդ մայր իւր . այլ զիարդ մարթ էր իւր մեկնել առանց նորին հրամանի , առանց գիտելոյ զհայրենիս նոցա , և վասն որոյ իրաց պարտն էր խնդրել թողութիւն : Հարկ էր նմա . յայտնել նոցա զխորհուրդ իւր , և ահա ժամ էր յայտնելոյ . եդ ծունր յերկիր , խնդրեաց 'ի Տեառնէ ածել զսիրտ նոցա 'ի հաւան . և մատուցեալ առ հայր իւր յետկուսէ՝ կայր յեց 'ի թիկնաթոռն յորում բազմէր . և վայրիկ մի լուռ կացեալ՝ զի թերեւս նա ինքն կանխեսցէ 'ի խօսել , իբրեւ ետես զի ընկըզմեալ էր նա 'ի խորհուրդս՝ խօսել կալաւ և ասէ . Խնդիր ինչ է ինձ 'ի քէն , հայր իմ : Նա 'ի վեր առեալ զգլուխ իւր՝ ակնարկեաց ասել . և դուստրն ասէ . Աւուրբք յառաջ 'ի հարցանել պատանւոյն Ամոլոֆի՝ թէ իցէ՝ ինչ քո խնդիր 'ի հօրէ իւրմէ , ետուր նմա պատասխանի՝ թէ ոչ ինչ . այլ արդարեւ չիցէ՝ ինչ քո խնդիր 'ի նմանէ : Հայրն ասէ . Եւ ոչ մի ինչ՝ զոր կարիցէ նա տալ ինձ : Դուստրն ասէ . Եւ ո՞ ապա կարիցէ տալ քեզ զոր խնդրեսդւ Հայրն ասէ . Ուղղութիւն և արդարութիւն : Դուստրն ասէ : Եւ ուր իցէ գտանել զայն : Հայրն ասէ . Յերկինս աներկրայապէս , իսկ 'ի վերայ երկրի ընաւ ամենեին : Եւ զայս ասացեալ՝ արկ անդրէն առ վշտին զգլուխ իւր 'ի վայր 'ի մէջ երկոցունց ձեռաց իւրոց : Լուցին առ վայր մի . և ապա կրկնեալ անդրէն օրիորդն ասէ խրախուսանօք ցծնօղս իւր . Լուարուք ինձ հայրիկ իմ և մայրիկ . եօթնեւ տասներորդ ամէ այսօր տիոց իմոց , այսօր ընկալայ 'ի ձէնջ զկեանս իմ , և սիրելի է ինձ փոխանակել զայն 'ի վերայ ձեր ,

հանդերձ սրտիւ իմով որ սիրէ զձեզ և մեծարէ որպէս պատկերս Արտուծոյ կենդանիս : Ի ծննդենէ և այսր ըստ թուոյ աւուրց կենաց իմոց եղեն բարերարութիւնք ձեր սու իս , և չեղեւ ինձ փոխարինել ձեզ ընդ այնոցիկ շնորհակալիս և սէր . զի զինչ իցեն շնորհակալիք սրտի առանց արդեանց . և իցէ ինչ սէր առանց հանդիսի ցուցակութեան : Թողէք ինձ առնել միանգամ վասն ձեր , զոր ոչ գաղարէք գուք առնել ընդ իս յօրէ ծննդեան իմոյ . մի խնայէք յայտնել աստ ուրեմն դստեր ձերում զգաղտնիս աղետիցդ : Պատասխանի ետ հայր նորա կարեվէր սրտիւ . Եւ առ ինչ խնդրես զայդ դուստր իմ : Դուստրն ասէ . Առ 'ի գիտել զկարեւորս տալոյ ձեզ առհաւատչեայ զսիրոյ իմոյ . զիաէ Տէր վասն որոյ իրաց համարձակիմս 'ի խնդրել :

Զայսոսիկ , զծնգովք հօրն վարեալ , աղիողորմ 'ի դէմս նորա հայեցիւք պաղատէր , այնպիսի վեհ և աղնուական կիրս յաչս իւր ընդ արտասուս բերելով , և արիութեան այնպիսի գերաշխարհիկ 'ի ցածուն կերպարանս նորա յաւելեալ , զի յայնմ ամենայնէ 'ի միտ առնոյր Ափրինճեր զիղձս դստերն փոքր 'ի շատէ , և 'ի փղձուկ հարեալ՝ շկարէր խօսել և ոչ լալ , այլ լուռ ևեթ կայր և անշարժ , որպէս յերեսաց հրեշտակի 'ի հիացման լեալ . Տէր երբէք սիրտ նորա 'ի սաստկութենէ վրշտաց այնպէս յուղեալ , որպէս 'ի խօսից անտի դստերն . արիութիւն նորա անյողդողդ , զոր ոչն կարէին գրդուեցուցանել թագաւորք , և ոչ արկածք բախտի ընկճել զայն , գորովեալ 'ի ձայնէ դստերն՝ խնդրէր զօրաւիգն , և ոչ գտանէր . և ցորչափ նալուեալ կայր , կայր և դուստրն առ ոտս նորա : Մատեաւ անդր Փեղորա յարուցանել զդուստրն . և կացեալ յետկուսէ՝ ուր նա 'ի գուճս կայր , և ոչ զշարժմունս նորա տեսսանէր և ոչ զաչս՝ որովք յայտնէրն հօր իւրում զարիական խորհուրդն , և անկասկած զաղետիցն՝ որ հանդերձեալ էին կեղերել զսիրտն մայրենի , ասէր ցայր իւր . Ընդէք խնայես զգաղտնիսդ 'ի դմանէ . 'ի մանկութենէ գորա զանգիտես . Երկնչիս թէ չկարասցէ դա հանդարտել վշտացն ընդ դառնութիւն աղետիցս : Իսկ հայրն յառեալ 'ի դուստր իւր , ասէ . Ոչ , չերկնչիմ 'ի տկարութենէ գորա : Յորմէ 'ի միտ էառ օրիորդն՝ զի հասու լեալ էր հայր իւր խորհրդոց իւրոց , և սեղմեաց զաջ նորա՝ ազդելով լուելեայն չյայտնել զայն մօր իւրում , զի ճանաչէր զսիրտ նորա , և հնարէր յամեցուցանել նմա զդառնակրսկիծ յայտնութիւնն . Յայնժամ գոչեաց

Սփրինճեր. Թուղ ինձ, տէր, որչափ ինչ տրտնջեցի. խորհէի և եթ 'ի բարիս՝ զորս բարձեր յինէն, այլ ոչ յորս պատրաստէիրն ինձ. դուստր իմ, մոռացուցեր դու ինձ այսօր զվիշտս երկոտասան ամաց: Եւ դուստրն ասէ. Այս ևս ասեր, հայր իմ, որպէս սովորութիւն է ասել թէ չիք յերկրի բարութիւն: Այլ աղաչեմ գքեզ, ասաինձ, զինչ անուն է քո, ո՞ր հայրենիք, և որպիսի հասեալ քեզ արկածք: Եւ հայրն ասէ. Ոչ մի ինչ հասեալ ինձ արկածք. հայրենիք ինձ անդ են, ուր դու մերձ կաս. և անուն իմ է՝ բարեբաստիկ հայր Ելիսաբեթի: Յաւել և ֆեղորա. Եւս քան զես բորբոքես դու զիս 'ի սէր, դստրիկ իմ, 'ի սիոփել զհայր քո: Գորովեցաւ 'ի բանից աստի Սփրինճեր. փարեցաւ զդստերբն և զմարբ նորա, և թացեալ զնոսա յարտասուս՝ կրկնէր և երեքկնէր հեկեկանօք. Աստուած իմ, թող ինձ, զի ապերախտեցայ. ներեա ինձ, և մի պատուհասեր զիս: Եւ 'ի յուզելոյ կրիցն վայրիկ մի հանդարտեալ, ապա ասէ ցդուստր իւր. Պատմեցից քեզ զամենայն, դուստր իմ, որ ինչ զիտել ցանկաս. այլ համբեր այլ ևս աւուրս ինչ, չկարեմ արդ խօսել զթշուառութենէ իմմէ. մոռացուցեր դու ինձ զայն: Իսկ օրիորդն, որ յամենայնի հլու էր ծնողացն, ոչ իշխեաց այլ ևս թախանձել՝ մնալով կամաց հօր իւրոյ 'ի վեր հանելոյ զգաղտնիսն. բայց մնայր 'ի զուր: Գոզցես իմն երկնչէր և խուսէր 'ի նմանէ Սփրինճեր. գուշակեալ էր նորա զխորհուրդ դստերն. և չկարէր յայտնել բանիւ զզարմանս և զշնորհակալիս հայրենի զթոյն. զգայր իսկ՝ զի չէին իւր իրաւունք ժխտելոյ դստերն զհրաման՝ զոր խնդրելոցն էր, այլ ոչ արիանայր տալ նմա զայն: Զէր իսկ և չէր այլ յոյս զերծանելոյ յաքսորանաց անտի, և հայթայթելոյ դստերն իւրում զանկն իւրոյ պայմանին. այլ յածել զմտաւ զանհնարին ճրգունս և զտհաղին վտանգ ուղեւորութեանն, չհանդուրժէր խորհրդոյն. յօժարէր զանձն իսկ նուիրել 'ի բարեկենդանութիւն իւրոցն, և վասն դարձուցանելոյ զնոսա 'ի հայրենիս. այլ զկեանս դստերն չիշխէր 'ի վտանգ արկանել:

Բայց Ելիսաբեթ 'ի լոռութենէ հօրն 'ի միտէառ որ ինչ պարտ էր գործել. ոչ ինչ երկրայէր զգուշակելոյ հօրն զմիտս իւր, և ոչ զգորովելոյ նորա ընդ այն. այլ եթէ գորովէր ընդ խորհուրդ իւր, ընդէր էր նմա խուսել յիւրմէ առ 'ի չխօսելոյ զայնմանէ: Արդարե խորհուրդն այն այնպիսի նորանըշան իմն էր, զի ծնողք իւր համարէին զայնս առաւելութեան ծնողասէր գթոյ զառան-

ցանս. վասն որոյ առ 'ի հաւանեցուցանել զնոսա՝ հարկ էր հնարաւոր ցուցանել զխորհուրդն, 'ի բաց բառնալ զխոչս ծանունս, յօդնականութիւն և 'ի խորհրդականութիւն Ամոլոփի ապաւինել: Այլ զիտէր զի և այսու ամենայնիւ չհաւանէին նմա ծնողք իւր. վասն որոյ խորհուրդ կալաւ լոել տակաւին, և չբանալ նոցա զսիրտ իւր՝ մինչչե խօսեալ զայնմանէ ընդ պատանւոյն: Գուշակէր զի նոքա ընդ հզօրագոյն պատճառս խափանելոյ զուղեորութիւն իւր՝ մի և զայն ունէին 'ի գէմս ածել, զի չէր իւր հնար յայնմ մատաղ հասակի հետեւակել մզոնս ութ հարիւր ընդ երկիր ցրտասառոյց. և առ 'ի կարող լինելոյ առնուլ զառաջս ընդդիմութեան նոցա՝ փորձէր հանապազօր զկար զօրութեան իւրոյ յիշմեան դաշտի, ոչ յանհարթութենէ օդոց կասեալ, ոչ 'ի սաստիկ ձիւնաբերաց, և ոչ 'ի թանձրութենէ միզի՝ ընդ որ հարկ էր նմա առ խարխափ զնալ: Զօր ամենայն երթայր անդր, անհրաման իսկ երթեմն 'ի ծնողաց իւրոց, և խոյս տուեալ 'ի նոցանէ՝ կրթէր տակաւ ընդդէմ մրրկաց խիզախել:

Զմերունք Ախպերիոյ մրրկալիցք են. բազում այն է՝ զի 'ի պարզոյ ամպրոպք ահագինք մթագնեն յանկարծ զերեսս երկնի. գան հասանեն հողմք ընդդէմ իրերաց, բերելով աստի զսառամանիս ծովուն հիւսիսի, անտի զփոթորիկս կասպիականին, և 'ի հանդիպել նոցա միմեանց՝ 'ի զուր եղենեաց հստարմատ կոճեզք, և յուրանաձեռունք ընդդէմ բարկութեան նոցա ճակատ յարդարեն. 'ի զուր և բարտիք ճապուկ գագաթամք և մշտատատան սաղարթիւք իւրեանց՝ յերկիր խոնարհին. բեկտին բընաւք և արմատախիլ տապալին: Ի բարձրաբերձ լերանց հիւսք ձեանց, և շառաչիղք սառամանւոյ անհեթեթք, վայրաբերեալ սաստիկ թաւալմամք, և բաղխեալ ընդ սեպս քարաժայոից՝ խորտակին և խորտակին. և հողմք բոնաշունչք զփլատակս լերանց, զնշխարս հիւղից, զանդեայ և զնախիր տապաստ արկեալ՝ յափշտակեն յօդս 'ի վեր, տանին արկանեն ցիր և ցան յերկիր, ծածկեալ համասփիւռ յաւերակաց համէից:

Ի միում աւուրց ամսեան յունուարի ընդ առաւուն պատահեաց օրիորդին մի յայսպիսեաց ահագին մրրկաց՝ յընդարձակ դաշտին գերեզմանաց, մերձ 'ի փայտակերտ աղօթանոց փոքրիկ: Ի տեսանել նորա մթագնեալ զերկինս՝ յաղօթանոց անդր 'ի ներքս անկաւ. հողմք ամեհիք կոծեալ զտկարն կերտուած և տատանեալ, 'ի հիմանց սպառնային կործանել. իսկ ինքն

խոնարհեալ առ սեղանովին կայր աներկիւղ. ամենայն ինչ շուրջ զնովաւ սասանեալ 'ի մըրկէն, սիրտ իւր միայն էր անսասան, յուսացեալ 'ի Տէր պահպանել ըզկեանս իւր վասն ծնողաց իւրոց, մինչև աղտոտեսցէ զնոսա: Առաւելազանց արդեօք էր այսքան վստահութիւն, այլ աղջումներկնաւոր՝ բարեպաշտիկ ոգւոյ զգալի՝ խրախուսէր զօրիորդն յարիութիւն անխով 'ի յոյզ տարերց, 'ի ճայթիւն ամպրոպաց. մինչև անվեհեր սրտին տեղի տալ վաստակաբեկ մարմնոյ, անկանել առ ուս սեղանոյն՝ առ որով աղօթէրն յանդորր 'ի նիրհ, իբր 'ի հայրենի գիրկս հանդշելով մանկան անմեղի, իբր առաքինութեան 'ի ծոց կրօնից:

Ի նմին աւուր դառնայր Ամոլոֆ 'ի թուպոլսքեայ, և ընդ հասանելն 'ի Սայիմքա՛փութացաւ 'ի հիւղ աքսորելոցն, բերելով զոր ընկալեալն էր հրաման՝ Փեդորայ և դստեր նորա գնալոյ 'ի Սայիմքա 'ի պաշտամունս տօնից 'ի կիւրակէս: Բայց Սփրինձերի ոչ միայն հրամանն այն ոչ շնորհեալ, այլ և խստիւ արգելոյր չգնալ անդր. և շտեսանել իսկ զնա Ամոլոֆի միւսանգամ, 'ի գթութենէ քաղաքապետին թոպոլսքեայ ըստ ոչ պարտեաց շնորհեալ նմա զայն վերջին նուագ, և զայս այսպէս պատանւոյն երդուեալ հօր իւրում: Տիսուր էր Ամոլոֆ ընդ այնքան խստութիւնն. այլ ըստ մերձենալ 'ի բնակութիւն օրիորդին՝ տիրութիւնն փոխէր յանդգաստից 'ի խնդութիւն. և զմայլումն վերստին տեսութեան նորա առաւել յոյժ աղդէր 'ի սիրտ իւր քան զվիշտ բաժանմանն դարձեալ 'ի նմանէ: Ի տիս մանկութեան վայելք բարեաց սաստիկ իմն խնդութիւն զեղեալ 'ի սիրտ, մոռացումն առնեն ամենայնի՝ որ զհետն հանդերձին գալ. մանկութիւն բոլորանուէր 'ի նոսին՝ ոչ ևս խորհի 'ի տեսողութիւն նոցին, սիրտ նորա երջանկութեամբն լցեալ չտայտեղի կասկածանաց կորստեան նորին:

Ամոլոֆ 'ի հիւղ անդր մտեալ, ընդ վայր 'ի խնդիր լինէր օրիորդին, զի չէր նա անդ. կասկածէր իսկ յառաջադոյն՝ թէ գուցէ հարկ լիցի նմա մեկնել անտի նախ քան դդարձ իւր, և չկարաց անկեղծ պատանին ծածկել զտրտմութիւն իւր ընդ այն: Թէպէտ և շնորհակալիս 'ի գորովեալ սրտէ մատուցանէր նմա Փեդորա, օրհնելով զձեռնն՝ որ բանայր նմա զդուռն տանն Տեառն, զձեռնն՝ որոյ զայր իւր ապրեցուցեալ էր. և թէպէտ Սփրինձեր կոչէր զնա պատսպարան և խնամակալ տառապելոց, այլ վեր 'ի վերոյ աղդէին բանք նոցա 'ի պատանին. հաղիւ պատասխանէր բանից

նոցա, և անուն և եթ օրիորդին էր անլըռելի 'ի շրթունս նորա: Խոռվութիւն ոգւոցն յայտ իմն առնէր զկիրս որտին, և առաւել այնու սիրելի զնա առնէր Փեդորայ. սէր նորա ընդ դստեր իւրում շողոմէր զփառասիրութիւն, հզօր 'ի սիրտ մայրենի: Ոչ նոյնպէս զիւրընկճելի էր 'ի գորովոյ Սփրինձեր. կասկածէր թէ գուցէ զգացեալ զայն դստերն՝ խոռվեսցի. ստիպէր զպատանին հնազանգել հօր իւրում, և կարճել զայցելութիւն իւր. այլ նա պէսպէս պատճառանօք ջանայր երկարածգել զայն: Յայնմ վայրի յարեաւ մրրիկն այն, և դողային ծնօղք օրիորդին վասն դստերն իւրեանց, և գոչէր մայր նորա տառապեալ. Ո՛հ, ո՛հ, զինչ արդ դստերն իմում, Ելիսաբեթին իմում, հասցէ պատահար: Իսկ Սփրինձեր լուռ և եթ առեալ զցուպ իւր՝ երաց զդուռնն, զնալ 'ի խնդիր դստերն. փութացաւ և Ամոլոֆ զհետ նորա: Բոնանայր մրրիկն, խորտակէին շուրջանակի մայրիք, վտանգ էր մահու յանտառին: Սփրինձեր ցուցանէր զայն պատանւոյն՝ առ 'ի խափանել զնա 'ի գալոյ ընդ իւր, այլ ոչ ինչ զօրէր. տեսանէր և նա զվրտանգն, այլ քամահէր զնովաւ, բարեբախտութիւն անձին համարէր զիմագրաւել վտանգին վասն օրիորդին:

Հասին 'ի միասին յանտառ անդր, և ասէ Ամոլոֆ. Յո՞ երթամք: Սփրինձեր ասէ. Ի դաշտավայրն, ուր հանապազօր զնայ Ելիսաբեթ. յաղօթանոց անդր թերեւ իցէ ապաստանեալ: Ոչ ևս ինչ յաւելուն, զնան անմոռնչ, տագնապ նոյն 'ի սրտի երկաքանչիւր. ոչ մի ինչ հարցուած առնեն իւրերաց, զիմեն անվեհեր, խոնարհին խուսեն 'ի տարափոյ ոստոց բեկտելոց, 'ի ձիւնաբերաց ընդ աչս իւրեանց հողմավարելոց, 'ի շանթից ժայռից զգլխով իւրեանց շուրջ փոթորկելոց: Հասին 'ի դաշտավայրն, ուր թէպէտ զերծք 'ի վտանգէ էին մայրեաց խորտակելոց, այլ անպատսպարք 'ի բացավայրին 'ի ստահակ հողմոց մրրկաց մղեալ տապալէին. և բազում ճգամբք մատեան 'ի փոքրիկ աղօթանոցն փայտակերտ, ուր յուսային զտանել զօրիորդն ապաստանեալ: Ա.յլ 'ի տեսանել զխարխուլ ապաստանին տախտակամած յարկին ահեղ ճարճատմամբ սպառնումն կործանման, զարհուրեալ կացին զմտաւ ածեալ զվտանգ օրիորդին 'ի ներքս անդ եթէ էր: Յայնժամ Ամոլոֆ զարմանահրաշ արիութեամբ, յառաջ քան զհայր օրիորդին խրախուսեալ եմուտ 'ի ներքս, և թուէր նմա երազել. զի ետես անդ զօրիորդն, ոչ թէ կիսամեռ զդողի հարեալ, այլ առ սեղա-

նով անկեալ քաղցր՝ ի քուն։ Կարկեալ եկաց անճառ հիացմամբ, և նշանացի ցուցանէր զայն Ափրինճերի. և երկաքանչխւրնովին զգացմամբ՝ ի ծունր անկան առ զուգահրեշտակ օրիորդաւն, որ Բարձրելոյն հովանաւորութեամբննջէր անդանօր։ Հայր նորա ՚ի զէմս դստերն յառեալ և զմայլեալ, իսկ պատանին պատկառանօք զաչս ՚ի վայր արկեալ չիշխէր իմն հայել յայնքան անմեղութիւն։ Զարթեաւ օրիորդն, ծանեաւ զհայր իւր, և զիմեալ՝ ՚ի զիրկս նորա, ասէ. Ո՛հ, զիտէի զի հոգայիր վասն իմ։ Իսկ հայրն փարեալ զնովաւ, ասէ. Ե՛հ, դուստր, յորպիսի հոգս արկեր զմեզ, զմայր քո տառապեալ և զիս։ Դուստրն ասէ. Ներեա ինձ հայր, զի եղէ նմա առիթ արտասուաց. Երթիցուք սրբել զարտասուս նորա։ Եւ ՚ի յառնելն տեսեալ զպատանին, բերկրալից զարմացմամբ ասէ. Երանի է ինձ, զի պաշտպանք իմ հսկեն զինե, Աստուած իմ յերկնից, հայր իմ և զույերկի։ Խանդաղատեցաւ պատանին ընդ բանս նորա մինչեւ յարտասուս. իսկ հայրն ասէ. Եւ ո՞րպէս կամիս առ մայր քո զնալ. իցէ քեզ հնար դառնալ արդ ՚ի տուն, օրիորդ տկար, խիզախել՝ ՚ի մարտ ընդգէմ միրկին՝ յորմէ սքանչելեօք Ամոլով և ես մազապուր զերծաք։ Դուստրն ասէ. Թող ցուցից զիորդ զօրութեան իմոյ. առաւելէ յիս ոյժ քան զոր կարծես. և ուրախ եմ, հայր, զի տեսցես քեզէն որչափ ինչ կարեմ առնել մօրիմում առ ՚ի սփորփումն։ Եւ յասելն զայս՝ ցոլանայր յաշաց օրիորդին արիութիւն այնպիսի, որ տայր հօր նորա ՚ի միտ առնուլ զհաստատութիւն դստերն ՚ի խորհուրդս իւր։ Եւ զնայր նա յեց ՚ի թես հօրն և պատանւոյն, որք օգնէին նմա՝ պատըսպարեալ զգլուխ նորա լայն լոգկօքն։ Փաղցր թուէին անդ պատանւոյն որոտընդուստ միրկաց արհաւիրք, մատուցանելով նմա պատեհ օգնելոյ օրիորդին. յաշս զնէր զվոտանդ կենաց՝ զոր ցանկայր բիւրիցս՝ ՚ի վերայ նորա փոխանակել. խիթայր և եթ դկենաց նորա, թէպէտ և վստահ էր ՚ի փրկել զնա, և յեռանդն սրտին ձայնատուր լինէր ամսլրոսպաց առ հասարակ ընդդէմ իւր։

Կը շարունակուի։

Հ. ԵԴ. Վ. Հիերուսուա:

## ՀԻՒԱՆԴ ԱՂՋԻԿՆ

Սրբազն իւղն գպաւ օրհասականին գարշապարաց. հնչեց մահագուշակ վլճիւն։ Այս տառապեալ հոգւոյս համար՝ արուեստ բժշկութեան ալ զեղ չունի։ Աշխարհք մարած է այս աղջրկան համար։ Ամենք կը հեռանան, ամենք կը փախչին. աւաղ, բարեկամութիւնն անդամ վերջի բարեներէն վախնալով՝ զլուխը վար կախած խոյս կուտայ։ Այս սրտակտուր վայրկենին անյողողդ վկայ՝ միայն մայրն է, որ կը կենայ իր սիրուն աղջրկան քովը։

Մթընցուցած մահճին վարագուրաց մէջ կը մտնէ. կը հեռացընէ անկէ մահանշան կերոնները. և հաւատով խրախուսեալ աչքով մը՝ առանց դոյնը նետելու կը նայի փայտէ խաչին վրայ, զոր կոյան քրիստոնեայ առած է ձեռացը մէջ. մէկդի կ'առնու օրհնեալ ջուրը, և սեականաչ տօսախէ սրսկիչը, օրհասականին անկողնին տխուր զարդերը։

Այլ երբ աւելի մօտէն կը տեսնէ այն սոսկալի սարսուռը զաւկին բոլոր կերպարանաց վրայ, այն պաղ ճակտէն կաթկըթած մահուան քրտինքը, այն մարմըրած աչուըները, « Ո՛հ, աղջիկս, կը կանչէ. եթէ ապրիս դու՝ ես ալ կ'ապրիմ, եթէ դու կը մեռնիս՝ ես ալ կը մեռնիմ։ Արդէն գերեզմանն առեր կը ծածկէքու հայրդ ալ քոյրերդ ալ. միայն մենք մնացեր ենք. դու ես իմ բոլոր ընտանիքս։ Դուն ալ հիմայ զիս պիտի թողուս. դու իմ արիւնս, դու իմ աղջիկս։ Զէ. դու պիտի ապրիս. Աստուած զքեզ պիտի առողջացընէ. մայրդ խիստ շատ կը սիրէ զքեզ. դու պիտի շմեռնիս։ Զեմ գիտեր ինչ ձայն է որ կ'ըսէ ինձի, թուսաւ։ Եւ միթէ յուսալու համար տենն անցած կը ընայ ըլլալ. Աստուած, մատղաշ հոգի աղջրկանս, կեցիր, միթոչիր. և թէ աշխարհքէս փախչիլ կ'ուզես՝ գոնէ սպասէ մօրդ ալ»։

Այսպէս հաւատք կը քաջալերէ զնա, յոյսն ոյժ կու տայ։ Այլ ինչ սրտագին խնամքով կը պահէ այս յոյսը։ Մատ-